

DOI: <https://doi.org/10.54338/18294200-2025.1-04>

ԳԵՈՂԵԶԻԱ

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱԳՐՈԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՄԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ**

Սամվել Զալիբեկի Կրոյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք Երևան, ՀՀ
kroyan.samvel@mail.ru*

Աշխատանքում դաշտային և լաբորատոր հետազոտությունների համադրման մեթոդով հետազոտվել են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հողակադաստրային շրջանացման և ագրոարտադրական խմբավորման սկզբունքներին վերաբերող հիմնահարցերը: Ուսումնասիրություններից բացահայտվել է, որ հաշվի առնելով հողակադաստրային շրջանացման առանձնահատկությունները, ՀՀ տարածքում առանձնացվել են հինգ հողակադաստրային մարզեր և մի շարք շրջաններ: Հաստատված է, որ հողակադաստրային շրջանացումը հիմք է հանդիսանալու հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման, հողօգտագործման, բնապահպանական և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:

***Բանալի բառեր.** հողատեսք, հողակադաստրային շրջանացում, ագրոարտադրական խմբավորում, տաքսոնոմիական միավոր, հողային ֆոնդ*

Ներածություն

Հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործումը հնարավոր է միայն հողի բերրիության համապարփակ ագրոնոմիական բնութագրմամբ, գնահատմամբ և հողատարածքների ճիշտ հաշվառմամբ, որն իրականացվում է միայն հողակադաստրային շրջանացման և հողերի ագրոարտադրական խմբավորման ֆոնի վրա: Դրանց լուծման արդյունավետ մեթոդներից են համարվում գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հողակադաստրային շրջանացման և ագրոարտադրական խմբավորման սխեմաների կազմումը: Հողերի հողակադաստրային շրջանացումը հիմք է հանդիսանում գյուղատնտեսական մշակաբույսերի ճիշտ տեղաբաշխման համար՝ հաշվի առնելով դրանց ունեցած պահանջները հողի և շրջակա միջավայրի բնական պայմանների նկատմամբ, ինչպես նաև հողատեսքերի կադաստրային գնահատման և հողերի արտադրողականության բարձրացման ու պահպանությանն ուղղված միջոցառումներ մշակելիս: Կազմված նոր սխեմայում փոփոխություններ են մտցվել որոշ հողակադաստրային շրջանների սահմանների անցկացման և անվանումների առումով:

Վերը նշված հիմնավորումները վկայում են այն մասին, որ ներկայացված հոդվածը արդիական է և բխում է ժամանակակից պահանջներից:

Նյութեր և մեթոդներ

Հայաստանի Հանրապետության հողերի հողակադաստրային շրջանացման ժամանակ առաջնորդվել ենք ՀՀ հողային օրենսգրքի Հոդված 30-ի Հողերի բնական գյուղատնտեսական շրջանացման և նորմավորման պահանջներին համապատասխան, ինչպես նաև օգտագործվել է ՌԴ Վ.Վ. Դոկուչանի անվ. հողագիտության ինստիտուտի առաջատար մասնագետների կողմից մշակված հողերի ագրոնոմիական բնութագրերի կազմման մեթոդական առաջարկությունները [1-3]:

Արդյունքներ և քննարկում

Ագրոկլիմայական ռեսուրսները և հողի բնութագրերը գնահատելու և գործնականում օգտագործելու նպատակով հանրապետության հողային ֆոնդի հողակադաստրային շրջանացման կատարելագործված սխեմայով իրականացվել է հողերի հողակադաստրային շրջանացում և ագրոարտադրական խմբավորում: Տվյալ դեպքում շրջանացման յուրաքանչյուր տաքսոնոմիական միավորի շրջանակներում տարածքների միավորումը հիմնված էր տարածքի բնական պայմանների եզակիության և գյուղատնտեսական արտադրության մեջ հողային ֆոնդի օգտագործման բնույթի վրա [4, 5]:

Հողակադաստրային մարզի առանձնացման համար հաշվի է առնվել տարածքի երկրաձևագիտական, հիդրոերկրաբանական, լեռնագրական և ձևակառուցվածքային հատկանիշները բնութագրող առանձնահատկությունները, հողառաջացնող մայրական ապարների կազմը, գյուղատնտեսական արտադրության մեջ հողային ծածկույթի օգտագործման և բարելավման վիճակը, ինչպես նաև ագրոկլիմայական ցուցանիշները, որոնք պայմանավորում են ծագումնաբանորեն և արտադրողականորեն միմյանց մոտ տեսակի հողատիպերի ձևավորումը:

Հողակադաստրային շրջաններն առանձնացնելիս հաշվի են առնվել տարածքի լեռնագրական և ագրոկլիմայական պայմանների բարդության և միատարրության աստիճանը, որը բնութագրվում է որոշակի բնական և էկոլոգիական պայմաններով, որոնք հանգեցնում են ծագումնաբանական և արտադրողական տեսակետից մոտ հողատիպերի և ենթատիպերի առաջացմանը: Միաժամանակ հաշվի են առնվում նաև գյուղատնտեսական արտադրության մեջ հողային ռեսուրսների օգտագործման կոնկրետ եղանակները [6-8]:

Հողատեսքերի ագրոարտադրական խմբերն առանձնացնելիս հաշվի են առնվում հողերի տաքսոնոմիական այն միավորները, որոնք բնութագրվում են գյուղատնտեսական մշակաբույսերի ընդհանուր էկոլոգիական պայմաններով և իրականացվող ագրոտեխնիկական և հողաբարելավման միջոցառումների միատեսակությամբ:


Հողերի ագրոնոմիական խմբերն առանձնացնելիս որպես հիմնական չափորոշիչներ ընդունվել են հողերի ախտորոշիչ տվյալները: Հաշվի են առնվել նաև լանջերի զառիթափությունն ու տարածքի մասնատվածությունը, ջրահեռացման առանձնահատկությունները, մայրական ապարների ծագումն ու բնույթը [9]:

Քանի որ հանրապետության վարչատարածքային միավորների սահմաններն անցկացվում են հիմնականում բնական սահմաններով, հողակադաստրային շրջանների սահմանները հիմնա-

կանում համընկնում են վարչական միավորների սահմանների հետ: Կոնկրետ որևէ վարչատարածքային միավորների համար նման շրջանացումը հնարավորություն է տալիս որոշել հողատեսքերի օպտիմալ հարաբերակցությունները և պահուստային պաշարները գյուղատնտեսական արտադրության ընդլայնման համար, գնահատել հողի բերրիությունը տվյալ տարածքի կոնկրետ պայմաններում, տարբերակել ագրոտեխնիկական և հողաբարելավման միջոցառումների անցկացումը և որոշել դրանց արդյունավետության արեալները [10]:

Հիմնվելով հողի ծագումնաբանական տիպերի, ենթատիպերի, սեռերի, ինչպես նաև հանրապետության առանձին շրջանների բնակլիմայական պայմանների վերաբերյալ առկա նյութի վերլուծության և ընդհանրացման վրա, նպատակ ունենալով համակողմանիորեն բնութագրել հողի բերրիության տարրերը կոնկրետ վարչական և տնտեսական շրջանների համար, կատարվել է տարածքի գիտականորեն հիմնավորված բաժանում հողակադաստրային մարզերի և շրջանների, իսկ հողակադաստրային շրջանների սամաններում առանձնացվել են հողերի ագրոարտադրական խմբերը [11]:

Այսպիսով, շրջանացման վերը նշված սկզբունքների հիման վրա հանրապետության տարածքում առանձնացվել են հետևյալ հողակադաստրային մարզերը, շրջանները և հողերի ագրոարտադրական խմբերը, որոնց բնութագրերը տրված են ստորև, համաձայն դասակարգման նոր միջազգային WRB համակարգի [12]: Ըստ նշված դասակարգման հանրապետության տարածքում առանձնացվել են հինգ հողակադաստրային մարզեր [13]: Դրանք են (նկար՝



Նկ. Հայաստանի Հանրապետության հողակադաստրային շրջանացման քարտեզ-սխեմա

Յուրաքանչյուր հողակադաստրային մարզի սահմաններում առանձնացվել են հողակադաստրային շրջանները:

Արարատյան հողակադաստրային մարզի մեջ ընդգրկված են հետևյալ հինգ շրջանները՝ Արարատյան դաշտ, Կարմրաշեն – Եղվարդի, Ուրծ – Վայքի, Երանոս – Արվայի, Ապարան – Հրազդանի:

Շիրակ հողակադաստրային մարզի մեջ ընդգրկված են հետևյալ երկու շրջանները՝ Ախուրյանի և Աշոցքի:

Հյուսիս-Արևելյան մարզում ընդգրկված են Լոռվա, Ստորին Աղստև-Դեբեդի, Վերին Աղստև-Դեբեդի, Գուգարքի և Փամբակ - Միափորի շրջանները:

Սևանի ավազան հողակադաստրային մարզի սահմաններում առանձնացվել է Սևանի, Արեգունի-Արևելյան Սևանի և Գեղամա-Վարդենիսի շրջանները:

Զանգեզուր հողակադաստրային մարզի մեջ ներառված են հետևյալ երեք հողակադաստրային շրջանները՝ Որոտանի, Սյունիքի և Բարգուշատի:

Նշված բոլոր հողակադաստրային շրջանների սահմաններում տարանջատվել են բազմաթիվ հողակադաստրային ագրոարտադրական խմբեր:

Եզրակացություն

Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը գնահատելու և գործնականում օգտագործելու նպատակով իրականացվել է հողերի հողակադաստրային շրջանացում և ագրոարտադրական խմբավորում:

Հենվելով հողի ծագումնաբանական տիպերի, ենթատիպերի, սեռերի, ինչպես նաև հանրապետության առանձին շրջանների բնակլիմայական պայմանների վերաբերյալ առկա նյութի վերլուծության և ընդհանրացման վրա, կատարվել է տարածքի գիտականորեն հիմնավորված բաժանում՝ հողակադաստրային մարզերի, շրջանների, իսկ հողակադաստրային շրջանների սահմաններում առանձնացվել են հողերի ագրոարտադրական խմբերը, որոնց բնութագրերը տրված են համաձայն դասակարգման նոր միջազգային WRB համակարգի:

Գրականության ցանկ

- [1] Методика государственной кадастровой оценки сельскохозяйственных угодий на уровне субъектов Российской Федерации. Гос. Комитет РФ по земельной политике, Москва, 2000.
- [2] Земельный кадастр: теория, методика, практика: учебное пособие, Под общей ред **А.А. Варламова**, ГУЗ, Москва, 2000, 532 с.
- [3] Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք. ընդունված է 2001թ մայիսի 2-ին:
- [4] **Ժ.Ա. Ամիրջանյան և ուր.**, Հողային ռեսուրսներ, հողերի օգտագործման և պահպանության կառավարում. Հողագիտության ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն, Երևան, 2000, 83 էջ:
- [5] **Р.А. Эдилян, К.Г. Мелконян**, Природно-сельскохозяйственное районирование Армянской ССР. В кн.: Почвы Армянской ССР, под ред Эдиляна и др. Айастан, Ереван, 1976. с. 350-367.

- [6] **Ա.Ս. Եզեկյան**, Հողերի որակական հատկությունների հաշվառում կադաստրային գնահատման ժամանակ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոնի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2003, էջ. 30-32:
- [7] **Ա.Ս. Եզեկյան**, Հայաստանի Հանրապետության վարելահողերի կադաստրային գնահատումը և հողօգտագործման արդյունավետության տնտեսական կարգավորման խնդիրները: Ատենախոսություն ... գ.գ.դոկտորի, Երևան, 2012, 283 էջ:
- [8] **Հ.Ղ. Ղազարյան, Ս.Զ. Կրոյան** Մեթոդիկա Հայաստանի գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման. Մեկնարկ, Երևան, 2019, 161 էջ:
- [9] **С.Е. Симомян**, Принципы агропроизводственной группировки земель горных районов на примере Абовянского района: Автореф. дис. ... канд. с.-х. наук, Ереван, 1975, 55с.
- [10] **Ռ.Ա. Էդիլյան, Գ.Ա. Մկրտչյան**, Հայաստանի հողային ծածկոցի բնագյուղատնտեսական շրջանացումը. Պոլիգրաֆիայի օպերատիվ արտադրամաս, Երևան, 1990, 55 էջ:
- [11] **Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов (Ред.)**, Почвы Армянской ССР. Айастан, Ереван, 1976, 383 с.
- [12] **А.С. Езекян, П.С. Эфендян**, Кадастровая оценка земель в горных условиях землепользования. Экологический вестник, Научно-практический журнал 1(19) (Минск, 2012) 5-10.
- [13] **В.О.Таргульян, М.И. Герасимова**, Мировая коррелятивная база почвенных ресурсов: основа для международной классификации и корреляции почв, КМК, Москва, 2007, 235 с.

ПРИНЦИПЫ ЗЕМЕЛЬНО-КАДАСТРОВОГО РАЙОНИРОВАНИЯ И АГРОПРОИЗВОДСТВЕННОЙ ГРУППИРОВКИ ЗЕМЕЛЬНЫХ УГОДИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО НАЗНАЧЕНИЯ РА

Самвел Залибекович Кроян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

kroyan.samvel@mail.ru

В статье рассматриваются вопросы, связанные с принципами земельно-кадастрового районирования и агропроизводственной группировки сельскохозяйственных угодий Республики Армения с использованием сравнения методов полевых и лабораторных исследований. В результате исследования выявлено, что с учетом особенностей земельно-кадастрового районирования на территории Республики Армения выделено пять земельно-кадастровых областей и ряд районов. Установлено, что земельно-кадастровое районирование будет служить основой для эффективного управления земельными ресурсами, землепользования, эффективной организации процесса кадастровой оценки земельных угодий сельскохозяйственного назначения.

Ключевые слова: *земельные угодья, кадастровое районирование земель, агропроизводственная группировка, таксономическая единица, земельный фонд*

PRINCIPLES OF LAND-CADASTRAL ZONING AND AGRICULTURAL GROUPING OF AGRICULTURAL LANDS IN RA

Samvel Kroyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
kroyan.samvel@mail.ru

The article examines issues related to the principles of land-cadastral zoning and agro-production grouping of agricultural lands in the Republic of Armenia using a comparison of field and laboratory research methods. As a result of the research, it was revealed that, taking into account the peculiarities of land-cadastral zoning, five land-cadastral regions and a number of districts have been identified in the territory of the Republic of Armenia. It has been established that land-cadastral zoning will serve as a basis for effective management of land resources, land use, and effective organization of the process of cadastral valuation of agricultural lands.

Keywords: *land holdings, cadastral zoning of lands, agricultural production grouping, taxonomic unit, land fund*

Կրոյան Սամվել Ջալիբեկի, գ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ինժեներական գեոդեզիայի ամբիոն, (+ 374)93515696, *kroyan.samvel@mail.ru*

Кроян Самвел Залибекович, к.с.-х.н., доцент (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Инженерной геодезии, (+ 374)93515696, *kroyan.samvel@mail.ru*.

Kroyan Samvel, doctor of philosophy (Ph.D) in Agriculture, Associate Professor (RA, Yerevan) – NUACA, Chair of Engineering Geodesy, (+ 374)93515696, *kroyan.samvel@mail.ru*.

Ներկայացվել է՝ 13.01.2025թ.

Գրախոսվել է՝ 27.02.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.